

## ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ

Լրացավ արձակագիր, դրամատուրգ եւ լրագրող Արտաշես Քալանթարյանի ծննդյան 50-ամյակը: Այդ առթիվ Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարությունը նրան հղել է ողջույնի խոսք, ուր մասնավորապես ասված է.

«Հարգելի Արտաշես Քալանթարյան.

Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարությունը սրտանց շնորհավորում է Ձեզ՝ ձեր ծննդյան 50-ամյակի առթիվ:

Շուրջ երեսուն տարի է, ինչ ձեր անունը ծանոթ է ընթերցող հասարակայնությանը, որը միշտ էլ գոհունակությամբ է ընդունել Ձեր ակնարկները, ուղեգրություններն ու երգիծական ստեղծագործությունները: Լրագրական ակտիվ գործունեությանը զուգընթաց, Դուք ստեղծել եք մանկական ու երգիծական բազմաթիվ պատմվածքներ, որոնք տեղ են գտել «Գունավոր երազներ», «Ալիկ բալիկը», «Խղճի գիշերային այցը» ժողովածուներում: Ընթերցողները առանձնակի ջերմությամբ են ընդունել Ձեր «Մարաթոն» վեպը, ինչպես նաև Բացեք ձեր աչքերը» ժողովածուն:

Վերջին տարիներին Դուք հանդես եք եկել մի շարք հետաքրքիր պիեսներով, որոնք ներկայացվել են հեռուստատեսությամբ, ռադիոյով եւ բեմադրվել հանրապետության թատրոններում:

Ցանկանում ենք ձեզ քաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ»:

«Գրական թերթ»ը սրտանց միանում է այս ողջույնին:

### ԻՄ ԿՐՏՍԵՐ ԳՐՉԵՂԲԱՅՐԸ

Զարմանում եմ, թե ինչպես մեր տղաները մեկը-մյուսի ետեւից դարձան հիսուն տարեկան:

Խոսքս մեր արձակի միջին սերնդի տղաների մասին է:

Նրանցից է նաև շատ սիրելի Արտաշես Քալանթարյանը:

Հրաշալի է: Երեկվա պատանին, որին ճանաչեցի հիսնական թվականների սկզբներին, այսօր արդեն թոռների տեր է, ճանաչված գրող, համբավ ունեցող մշակույթի գործիչ:

Եւ այսօր ես ամենից շատ հիշում եմ մեր Արտաշեսի ծննդավայր, ավելի շուտ հոր ու պապերի բնօրրան Շամշադին շրջանը, որը լավ գիտեմ, շատ անգամ եմ տեսել: Բայց ահա չեմ տեսել ազնվական հորը՝ Փիրադային:

Ո՛չ իմ մեղքով:

Մեր հանրապետության հյուսիսը շատ մեղմ, քնքուշ կանաչ, հրավիրող անտառներ, անուշահամ գինի եւ այլ բարիքներ ունի:

Դա Շամշադինի շրջանն է՝ պատմական Արցախի հայոց մեծ նահանգի Քուստական գավառի մի մասը:

Ասեմ, որ Շամշադինը կապ չունի ոմն նվաճող Շամսեդինի հետ, որին գիտենք Բաֆֆուց: Անհիշելի հին հայոց այդ գավառը երեք-չորս հազար տարի առաջ ուներ բնիկ հայկական, սիրելի անուն՝ Արեւիք:

Այդ գավառի ծնունդ մեր Արտաշեսը, թեեւ քաղաքում է ապրել (Երեւանում) իր մանկությունից, թեեւ նրա գրական հոգեբանությունը մեծավ մասամբ քաղաքային է, սակայն նրա գրական աշխարհի վրա իր բարերար հետքն է թողել հայրենի լեռնաշխարհը՝ մեղմ, քնքուշ, սիրելի, բարի, անսահման բարի այդ լեռնաշխարհը:

Ես Արտաշեսին հիշում եմ, երբ նա համալսարանի ուսանող էր: Բայց ուսանողին ոչ միայն հոգեկան սնունդ, այլև մարմնական սնունդ, այսինքն՝ հաց էլ է պետք:

Ուսանելով, Արտաշեսը նաեւ աշխատում էր: Նրա աշխատած միջավայրերից ամենից շատ իմ սրտին հարազատ է նրա ցրիչ լինելը: Կարծում եմ, դա նաեւ իր սրտին է մոտ:

Գուցե պատճառն այն է, որ փոքր հասակումս ես էլ եմ ցրիչ՝ ավելի ստույգ՝ գյուղական փոստատար եղել, փոստատար հորս հետ:

Ամեն աշխատանք սուրբ է: Սուրբ է նաեւ ցրիչի գործը:

Եւ իր այդ ստնտու աշխատանքը՝ ցրիչ լինելը, առասպելի նման մտել է նրա կյանքի մեջ: Ի՛նչ սքանչելի աշխարհ՝ մեղմ, մանր վշտերով, մեծ հույսերով լի աշխարհ: Եւ հետագայում, երբ Արտաշեսը դարձավ ճանաչված գրող, ցրիչի այդ սքանչելի աշխարհը բերեց իր գրականության մեջ:

Այս դեպքում նա ինքնուրույն է: Նա ի՛ր ՅԲԻՉՆ ունի, ի՛ր ասելիքը, հոգեբանական իր բարդությունը:

Մեր Արտաշեսն իր գրական գործերում խրվում է, եթե կարելի է ասել, «փոքր» մարդկանց կյանքի մանրուքների մեջ, դառնում նրանց ցավակիցն ու վշտակիցը, հոգսակիցն ու ուրախության կիսողը: Նա շատ լավ է տեսնում փոքր մարդկանց փոքր զանցանքները, որոնք երբեք հանցանք չեն դառնում: Եւ գրական զանազան ժանրերի միջոցով աշխատում է մեղմացնել մարդուն բնորոշ այդ մանր մեղքերը, մարդուն հեռու պահել դրանցից:

Ինչ խոսք, Քալանթարյանը նաեւ խոշոր հանցանքներն է նկատում, որ, անշուշտ, կան մեզանում: Այս դեպքում նա շիկացած աքցան-գրչով է բռնում նմանների օձիքները.

- Մարդ դարձեք: Մարդ եղեք:

Քալանթարյանը հրաշալի մարդասեր է, ընկածին օգնող, մոլորվածին (ոչ հանցագործին) շիտակ ճանապարհ ցույց տվող:

Նրա մտահոգությունն այս է՝ ամեն դեպքում չէ, որ մարդուն պետք է պատժել դատարանով: Եւ ամեն դեպքում չէ, որ դատարանը պետք է միայն պատժի:

Դատարանը, դատավորը պետք է մարդուն բարեկամ լինեն, մարդուն օգնական լինեն:

Այսպես եմ մտածում ես: Այսպես է մտածում, նաեւ գործում իմ բարեկամ Արտաշես Քալանթարյան գրողը, մարդը, գործիչը:

Ես չեմ թվարկի նրա բոլոր երկերը, իսկ դրանք քիչ չեն: Ուզում եմ հիշեցնել «Խղճի գիշերային այցը», «Մարաթոն», նաեւ վերջերս լույս աշխարհ եկած «Բացեք ձեր աչքերը» վեպերը: Սրանք արվեստի իսկական գործեր են:

Սակայն պետք չէ մեզ այն արվեստը, որը չի օգնում մարդուն, հանրային հոգսին ու խնդիրներին: Այս առումով Արտաշեսի արվեստը խիստ պիտանի է մարդուն, ժողովրդին, երկրին:

Շատ առաջներում ես Արտաշեսին ծանոթացա նախ իր ֆելիետոնների միջոցով: Հատկապես հիշում եմ նրա կարծեմ առաջին ֆելիետոնը՝ «Անունները տալով»: Սա շատ աղմուկ հանեց՝ նախ ի նպաստ հեղինակի՝ Արտաշեսի, ապա ի նպաստ ճշմարտության, հետո, անշուշտ, նաեւ ի պախարակումն մերժված ու մերժելի բարքերի տեր մարդկանց:

Բազմաժանր գրող է Արտաշես Քալանթարյանը: Եւ լավն այն է, որ յուրաքանչյուր ժանրի մեջ էլ նա հավասար ուժ ու տաղանդ է հանդես բերում:

Մարդկանց համար աշխույժ եւ բուռն հետաքրքրություններ են ներկայացնում նրա հեռուստատեսային-թատերական գործերը: Մարդիկ դրանց մեջ տեսնում են մեր ապրած ժամանակը՝ իր հոռի ու բարի կողմերով, իրենց շրջապատի մարդկանց, նաեւ իրենց: Արտաշեսը հմուտ գիտի մեր օրքենքները, մեր ժամանակի բարքերն ու հոգեբանական երեվոյթները:

Նրա թատերական գործերը հիմնականում երգիծական-կատակերգական են, մի ժանր, որ խիստ պետք է քսաներորդ դարի այս վերջին տասնամյակների համար:

Արտաշես Քալանթարյանը երաժշտական կոմեդիայի թատրոնի սիրելի հեղինակներից մեկն է: Հիշենք, որ հենց երեկ, այսինքն՝ մի տարի առաջ, Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց նրա «Քանի դեռ կամ» կատակերգությունը, որն արժանացավ թե՛ հանդիսատեսի, թե՛ մամուլի եւ թե՛ մասնագետների գովասանքներին:

Ճանապարհորդական նոթերի ժանրի մեջ եւս գովելի հաջողություններ ունեցավ Արտաշես Քալանթարյանը: Առանց մտքիս ու հիշողությանս զոռ տալու էլ մտաբերեցի նրա ուղեգրական շատ բնորոշ, ուսանելի ու աշխարհաճանաչողության համար պիտանի նոթերը՝ Ավստրալիա, աֆրիկյան երկրներ եւ այլ տեղեր կատարած ուղեվորությունների մասին:

Քալանթարյան գրողը շատ բարեկամներ ունի նաև այլազգի ընթերցողների շրջանում: Նրա բարեկամների թիվն ավելացել է նաև իր կատարած թարգմանությունների շնորհիվ:

Քալանթարյանը մարդուն բարեկամ է սրտացավ ու ազնիվ մղումներով: Ուրախ եմ, որ մեր ընթերցողը, լսողը, դիտողը եւս նրան համարում է իր բարեկամը:

Այո՛, գրողը պետք է բարեկամը լինի մարդ արարածի:

Դա օրհնված երեւոյթ է:

Գիտեմ, որ Արտաշես Քալանթարյանը լի է ստեղծագործական մտահղացումներով: Հիսուն տարին՝ փորձից գիտեմ, նույնիսկ նախասահման էլ չի գրողի համար: Դա շատերի համար դեռ սկիզբ է: Մեր Արտաշեսն իր հիսուն տարում մեծ վաստակով է նայում մեզ ու աշխարհին:

Հաջորդ հիսուն տարին կեռապատկի նրա ազնիվ վաստակը:

Ես համոզված եմ դրանում:

**ՄԵՐՈՒ ԽԱՆՁԱԴՅԱՆ**